Որքան ինձ ախորժելի էր լսել Մարոյից նրա ուխտագնացութեան ուրախալի, միեւնոյն ժամանակ անկապ պատմութիւնը, այսոամենայնիւ ես անհամբերութեամբ նրա խօսքը կտրեցի, հարցնելով, թէ ո՞ւր գնացին տղերքը եւ ինչո՞ւ ինձ թողեցին:

Նա ասաց, թէ տղերքը տեսնելով, ես քնած եմ, թողեցին հանգստանալ, իրանք գնացին որսորդութեան. թէ նրանք պատուիրեցին Մարոյին յայտնել ինձ՝ եթէ ես ցանկութիւն կունենայի մասնակցել որսորդութեանը, կարող էի գտնել նրանց Խանա-սորի ձորի մէջ:

— Կուզե՞ս ասեմ,որ Մըհէն քո ձին թամքէ, — հարցրեց Մարօն: — Դու մի բան չե՞ս ուտի, ճանապարհը հեռու է, մինչեւ Խանա-սորի ձորը, շատ հեռու է, կը քաղցես: Ես հիմա կաթը տաքացրի, սէրը քեզ համար պահեցի: Կուտե՞ս բերեմ:

«Քեզ համար պահեցի»... — այս խօսքերը հնչեցին իմ ականջին, որպէս քրոջ խօսքեր իրանց բոլոր անուշահոտութեամբ: Նա դեռ մտերիմ էր ինձ հետ, որպէս առաջ, երբ դեռ երեխայ էր, երբ իրանց տանից կերակուր էր բերում մեզ, որը բարի որսորդը բաժանում է իր աղքատ դրացու հետ:

— Բե՛ր, կուտեմ, — պատասխանեցի ես: — Ինչո՞ւ հէնց «ինձ համար» սէրը, — հարցրի յետոյ:

— «Լաւ է նոր սատանան, քան հին քահանան», — ասաց նա ծիծաղելով: — Կարօն եւ Ասլանը էլ այնքան երեսի տեղ չունեն, Սագօն խօ զահլայ է տանում. ես նրան համբերել չեմ կարող: Բայց մենք վաղոայ ընկերներ ենք, այդպէս չէ՞, Ֆարհատ:

— Ես այդպէս չէի մտածում, ես մտածում էի, երբ Մարօն ինձ տեսնէ, կասէ, դու իմ ընկերը չես, դու ինձ ծեծում էիր, երբ երեխայ էի:

— Ի՞նչ անենք, ես էլ Մարիամին ծեծում էի, մի օր երեսը ճանկռտեցի, արիւն դուրս եկաւ. հիմա այնքա՜ն ուզում եմ, այնքան ուզում եմ, որ նրան տեսնեմ: Նա հիմա ինձ չի կանչի «բոշա». նա հիմա խելօքացել է, չէ՞, Ֆարհատ:

— Աւելի, քան Մագթաղը: Բայց դու Մագթաղին շատ էիր սիրում:

— Մագթաղը խեղճ երեխայ էր, Մարիամը գազան էր. ա՜խ, աստուած, մէկ օր չէր անցնի, որ մենք մէկ մէկու պատահելիս՝ չկռուենք: Ինչքա՜ն յիմարներ էինք մենք...:

Վաղեմի յիշողութիւնները զարթնեցրին նրա մէջ տխուր զգացմունքներ, եւ ուրախ աղջկայ պայծառ երեսը մռայլուեցաւ սեւ թախիծներով: